ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2021 թվականի N 260-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-րդ, 564-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Տաշիր համայնքի աճուրդային հանձնաժողովի 2021թվականի ապրիլի 30-ի ի N1 արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանարպետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող, քաղաք Տաշիր, թաղամաս 14, Երևանյան փողոց, թիվ 381/2 հասցեում գտնվող անշարժ գույքը (19349 քմ մակերեսով հողամաս՝ վկայական N19082015-06-0029, կադաստրային ծածկագիր՝ 06-008-0291-0015 և նրա վրա կառուցված 301,23 քմ ընհանուր մակերեսով շինություններ) 18350000 (տասնութ միլիոն երեք հարյուր հիսուն հազար) դրամով օտարել Տաշիրի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի կողմից 2021 թվականի ապրիլի 30-ի աճուրդում հաղթող ճանաչված Համայակ Սիմոնի Հարությունյանին:
2. Համայակ Սիմոնի Հարությունյանի հետ կնքել օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 30
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մայիսի 2021 թվականի N 261-Ա

## ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2.2 կետով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման նախարարություն համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանի հավելված 1-ի 8.4 կետը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-4) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցության հանձնաժողովի հետևյալ կազմը՝
1)Հովհաննես Ավետիսյան-Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
2)Նաիրա Բարխյան -Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
3)Ռուբիկ Ղազարյան-Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
4)Նորայր Բաղդասարյան-Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
5)Կարեն Բաղդասարյան-ավագանու անդամ,
6)Արմեն Խանաղյան-ուսումնական հաստատության ներկայացուցիչ:
2.Հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի համակարգչային օպերատոր Արփինե Արագի Սոլոյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 03
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մայիսի 2021 թվականի N 262-Ա

## ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2.2 կետով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման նախարարություն համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանի հավելված 1-ի 8.4 կետը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-6) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը՝
1)Հովհաննես Ավետիսյան-Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
2)Լուսինե Վարդանյան -Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
3)Աշոտ Ավետիսյան - Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
4)Ռուբիկ Դավոյան-Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
5)Անդրանիկ Գալստյան – ավագանու անդամ,
6)Սերինե Սոլոյան-ուսումնական հաստատության ներկայացուցիչ:
2. Հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի համակարգչային օպերատոր Արփինե Արագի Սոլոյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 03
ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մայիսի 2021 թվականի N 263-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի N179-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 38-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Անվավեր ճանաչել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 7-ի «Պետիկ Գարեգինի Ավդալյանին շինարարության թույլտվություն տալու մասին» N179-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ` Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 03
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 մայիսի 2021 թվականի N 264-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետը, 50-րդ կետը և 62-րդ կետը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Զվարթ Հաբեթի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական՝ 2158009, տրված՝ 16.10.2006-ին) Լոռու մարզ, ք. Տաշիր, Կիրովի փ. տուն թիվ 148 բնակելի տուն հասցեի փոխարեն տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք.Տաշիր, 4-րդ թաղամաս,Երևանյան փողոց, թիվ 148 փոստային հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 04
ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մայիսի 2021 թվականի N 265-Ա

## ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 2) ենթակետով, 50-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Արմեն Արամի Սուքիասյանին սեփականության իրավունքով պատկանող, ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, 9-րդ թաղամաս, Երևանյան փողոց, թիվ 290 (անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ 19042021-06-0027, տրված՝ 19.04.2021-ին) և ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, 9-րդ թաղամաս, Երևանյան փողոց, թիվ 292 (անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ 12052020-06-0005, տրված՝ 12.05.2020-ին) հասցեներում գտնվող միավորված անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, 9-րդ թաղամաս, Երևանյան փողոց, թիվ 290:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 05
ք.Տաշիր